ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **17.02.2021թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 01.02.2021թ. N 01-Լ որոշման 3-րդ կետի համաձայն որոշվել է Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունները քննարկել հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2021 թվականի փետրվարի 16-ին և ավարտվել 2021 թվականի փետրվարի 17-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Հարցեր.

1. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունների ներկայացում և քննարկում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Մ. Առաքելյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ.Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Ավանեսյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Բրուտյան - ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Գ. Գրիգորյան - «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Մ. Առաքելյանը քվեարկեց կողմ,
2) Լ. Նանուշյանը քվեարկեց կողմ,
3) Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
4) Ա. Ավանեսյանը քվեարկեց կողմ,
5) Ք. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
6) Կ. Բրուտյանը քվեարկեց կողմ (ներկայացված է դիտարկում՝ կցված),
7) Գ. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
8) Շ. Դանիելյանը քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ 8 կողմ, 0 դեմ:

Խորհրդի անդամներից 2-ը չեն քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարին.

1) միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններով ընդգրկված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ;

2) ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններով ներկայացված առաջարկությունների կատարումը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ